ՀՊՏՀ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի բացմանը

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ, գործընկերներ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում այսօր մեկնարկում է «Զարգացման ժամանակակից մարտահրավերները» խորագրով 24-րդ գիտաժողովը: Ուրախալի փաստ է, որ համալսարանի տարեկան գիտաժողովը համալսարանական, գիտական և ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներին մեկ հարկի տակ համախմբելու հերթական առիթն է ընձեռել:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովի խորագրի ընտրությունը, բնականաբար, պատահական չէ: Համաշխարհային զարգացումները և ներկա իրողությունները նոր մարտահրավերներ են պետությունների համար և պարտադրում են զարգացման նոր լուծումներ: Հարափոփոխ աշխարհում կատարվող իրադարձություններն ու զարգացումներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում նաև մեր երկրի

զարգացման վրա, հետևաբար անհրաժեշտություն է դառնում տնտեսական զարգացման համար նոր մոտեցումների կիրառումը:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014-2017թթ. ծրագիրը արձանագրում է բարենպաստ գործարար միջավայրի ձևավորումը՝ որպես ներդրումների ներգրավման գրավական: Այս նպատակին հասնելու համար նախատեսված են մի շարք քայլեր, ընդգծված են առաջնահերթություն համարվող ոլորտներ:

Հայաստանյան տնտեսության բոլոր շերտերի և հիմնախնդիրների ամբողջ ներկապնակին մասնագիտական, փորձագիտական անդրադարձ կարվի այս եռօրյա գիտաժողովի շրջանակներում: Մեր մասնակիցների ուշադրության կենտրոնում են տասնյակ հարցեր, որոնք վերաբերում են մեր հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գերակայություններին, ֆինանսական շուկաներին և ենթակառուցվածքներին, միջազգային տնտեսական համագործակցությանն ու կրթության որակի, ինչպես նաև կայուն զարգացման ապահովմանը:

Հարգելի ներկաներ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը կայուն և նպատակային քայլերով

ընթանում է բուհում գիտահետազոտական ուղղությունն ամրապնդելու ուղղությամբ: Այս ճանապարհին մեր խոշորագույն քայլը «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ստեղծումն է: Հաջողությամբ ներդրվել և իրագործվել է ներհամալսարանական գիտական դրամաշնորհների կարգը, այս տարվանից իրենց աշխատանքներն են սկսել գիտաուսումնական խմբերը: Սա ևս կարևոր քայլ է՝ ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու առումով: Համալսարանի սեփական միջոցների 3,7 տոկոսը մենք հատկացնում ենք բուհական գիտության զարգացմանը:

Որպես հայաստանյան տնտեսագիտական ամենախոշոր բուհ՝ մեր առաքելությունն ենք համարում ոչ միայն տնտեսության համար որակյալ կադրերի պատրաստումը, այլև հանրապետության տնտեսության հրատապ խնդիրների լուծման գործընթացում մեր անմիջական մասնակցությունը բերելը: Այս համատեքստում են արվել վերը նշված քայլերը, որոնք շարունակական գործընթացի մաս են:

Հարգելի ներկաներ

Հուսով եմ, որ առաջիկա երեք օրերը արդյունավետ կլինեն և հնարավորություն կտան վեր հանելու մեր երկրի տնտեսության համար այժմեական և հրատապ

հիմնախնդիրները, ինչպես նաև առաջադրելու մասնագիտական լուծումներ:

Շնորհակալություն եմ հայտնում գիտաժողովի նկատմամբ հետաքրքրության համար, շնորհակալություն եմ հայտնում գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին՝ մասնակցության համար: Գիտաժողովը հայտարարում եմ բացված և մաղթում եմ կառուցողական աշխատանք:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր,

դոկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ